# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*Հասցե՝ Շահումյան 1*

*Հեռ. 2-20-20*
*Էլ. փոստ. yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am*

*12.08.2018թ.*

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ երիտասարդներ,

Շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:

Երիտասարդները հզոր ուժ են, դրա մասին միշտ է խոսվել, իսկ վերջին շրջանում դա տեսավ և զգաց մեր համախմբվածությունը:

Տարբեր բնագավառներում ձեր արձանագրած հաջողություններով ու նվաճումներով դուք բարձր եք պահում Եղեգնաձոր համայնքի պատիվն ու անունը՝ պարգևելով հպարտություն և վստահություն մեր վաղվա օրվա հանդեպ:

Ես կոչ եմ անում ձեզ լինել գործունյա, դրսևորել ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, ունենալ վառ ու համարձակ երևակայություն:

Մաղթում եմ երազանքների իրականացում, անկոտրում կամք և վճռականություն՝ ի շահ մեր համայնքի:

Հարգանքով՝ Դավիթ Հարությունյան